Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«16» ապրիլ 2024 թ.
N 542-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 3-ի N 2045-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգի»՝ կազմակերպում է գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու **մրցույթ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր իրականացնող գիտական պետական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից՝ Կոմիտեի orgs.hesc.am համակարգով, մինչև 2024 թվականի հունիսի 14-ը ներառյալ:

Մեկից ավելի հայտերի դեպքում կազմակերպությունը ներկայացնում է հայտերի վարկանիշային ցանկ՝ ըստ կազմակերպության (բուհերի դեպքում՝ ըստ բազային ֆինանսավորման ծրագրի) առաջնահերթությունների:

Կազմակերպության ներկայացուցիչը (գիտական քարտուղար կամ այլ պատասխանատու անձ) մինչև 2024 թվականի հունիսի 21-ը ներառյալ, մեկ ընդհանուր փաթեթով, Կազմակերպության ղեկավարի պաշտոնական գրությամբ, որտեղ նշված է գիտական ստորաբաժանման՝ տվյալ սարքերով և նյութերով վերազինման անհրաժեշտության և կազմակերպության հետագա զարգացման համար դրա կարևորության մասին, Կոմիտե է ներկայացնում կազմակերպության կողմից տրված

բոլոր հայտերի ստորագրված և կնքված թղթային տարբերակների փաթեթներն՝ առձեռն (ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 708 սենյակ):

Կազմակերպության յուրաքանչյուր գիտական ստորաբաժանման նյութատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքեր/սարքավորումներ ձեռք բերելու նպատակով Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն կարող է տրամադրել մինչև 20,000.0 հազար (քսան միլիոն) դրամ:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Կոմիտեից՝ զանգահարելով 010-210-140 (*113 կամ, տեխնիկական հարցերով՝ *108):